«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 11

03.06.2021թ.

1. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում 2021թ. ապրիլի 27-ին և մայիսի 1-ին հայտարարված ամբիոնի վարիչի և քոլեջի տնօրենի թափուր պաշտոնների մրցույթի վերաբերյալ.

- ՀԱԱՀ բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների ամբիոնի վարիչի թեկնածու Նունե Ռուբիկի Սիմոնյանի օգտին գիտական խորհրդի ներկա 58 անդամներից քվեարկել են 57-ը («կողմ»՝ 49, «դեմ»՝ 1, «անվավեր քվեաթերթիկներ»՝ 7): Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների հիման վրա Նունե Ռուբիկի Սիմոնյանն ընտրվել է ՀԱԱՀ բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների ամբիոնի վարիչի պաշտոնում:

- ՀԱԱՀ Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի տնօրենի թեկնածու Վարդան Ալեքսանի Վարդանյանի օգտին գիտական խորհրդի ներկա 58 անդամներից քվեարկել են 57-ը («կողմ»՝ 50, «դեմ»՝ 2, «անվավեր քվեաթերթիկներ»՝ 5): Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների հիման վրա Վարդան Ալեքսանի Վարդանյանն ընտրվել է ՀԱԱՀ Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի տնօրենի պաշտոնում:

2. Դոցենտի գիտական կոչում շնորհելու մրցույթի վերաբերյալ.

ՀԱԱՀ բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, տեխնիկական գիտությունների թեկնածու Լիլիա Ռոբերտի Սամվելյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու համար գիտական խորհրդի ներկա 58 անդամներից քվեարկել են 57-ը («կողմ»՝ 45, «դեմ»՝ 4, «անվավեր քվեաթերթիկներ»՝ 8): Հիմք ընդունելով գիտական խորհրդի փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները, Լիլիա Ռոբերտի Սամվելյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում՝ Ե.18.00 «Պարենամթերքների տեխնոլոգիա» մասնագիտությամբ:

- ՀԱԱՀ բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, տեխնիկական գիտութ-յունների թեկնածու Նարինե Տիգրանի Կարապետյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու համար գիտական խորհրդի ներկա 58 անդամներից քվեարկել են 57-ը («կողմ»՝ 50, «դեմ»՝ 2, «անվավեր քվեաթերթիկներ»՝ 5): Հիմք ընդունելով գիտական խորհրդի փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները, Նարինե Տիգրանի Կարապետյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում՝ Ե.18.00 «Պարենամթերքների տեխնոլոգիա» մասնագիտությամբ:

- ՀԱԱՀ անասնաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, տեխնիկական գիտությունների թեկնածու Մերի Էռնեստի Բաղդասարյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու համար գիտական խորհրդի ներկա 58 անդամներից քվեարկել են 57-ը («կողմ»՝ 50, «դե»՝ 1, «անվավեր քվեաթերթիկներ»՝ 6): Հիմք ընդունելով գիտական խորհրդի փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները, Մերի Էռնեստի Բաղդասարյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում՝ Ե.18.00 «Պարենամթերքների տեխնոլոգիա» մասնագիտությամբ:

- ՀԱԱՀ անասնաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, տեխնիկական գիտությունների թեկնածու Ալիսա Համոյի Գրիգորյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու համար գիտական խորհրդի ներկա 58 անդամներից քվեարկել են 57-ը («կողմ»՝ 49, «դեմ»՝ 1, «անվավեր քվեաթերթիկներ»՝ 7): Հիմք ընդունելով գիտական խորհրդի փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները, Ալիսա Համոյի Գրիգորյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում՝ Ե.18.00 «Պարենամթերքների տեխնոլոգիա» մասնագիտությամբ:

- ՀԱԱՀ բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, տեխնիկական գիտությունների թեկնածու Նարինե Գեղամի Հովհաննիսյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու համար գիտական խորհրդի ներկա 58 անդամներից քվեարկել են 57-ը («կողմ»՝ 50, «դեմ»՝ 1, «անվավեր քվեաթերթիկներ»՝ 6): Հիմք ընդունելով գիտական խորհրդի փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները, Նարինե Գեղամի Հովհաննիսյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում՝ Ե.18.00 «Պարենամթերքների տեխնոլոգիա» մասնագիտությամբ:

- ՀԱԱՀ ագրարային էկոնոմիկայի ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու Քրիստինե Սամվելի Սահակյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու համար գիտական խորհրդի ներկա 58 անդամներից քվեարկել են 57-ը («կողմ»՝ 50, «դեմ»՝ 0, «անվավեր քվեաթերթիկներ»՝ 7): Հիմք ընդունելով գիտական խորհրդի փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները, Քրիստինե Սամվելի Սահակյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում՝ Ը.00.00 «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ:

3. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության, ինչպես նաև Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական խմբերի մեկնարկի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթներին ներկայացվող հայտերի երաշխավորման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ գիտական խորհուրդը միաձայն որոշեց.

3.1. Հաշվի առնելով, որ ներկայացված թեմաները համապատասխանում են համալսարանի ռազմավարությանը, կարևոր են և իրագործելի, երաշխավորել ստորև ներկայացված հայտերը՝ ՀՀ գիտության կոմիտե ներկայացնելու և Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթին մասնակցելու համար.

- «Կլիմայի փոփոխության պայմաններում Հայաստանի Հանրապետության արիդ և սեմիարիդ տարածաշրջանների վարելահողերի և բնական կերհանդակների խոցելիության գնահատում և դրանց կառավարման վերաբերյալ միջոցառումների մշակում» (ղեկավար՝ գյուղ. գիտ դոկտոր, պրոֆեսոր Մերուժան Գալստյան),

- «Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիաներ՝ ջերմային սթրեսի կարգավորումը ձկների և ընտանի թռչունների մոտ» (ղեկավար՝ կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Աստղիկ Փեփոյան),

- «Բնական (անջրդի) պայմաններում մշակաբույսերի արտադրության արդյունավետության բարձրացման ապահովումը նոր պոլիմերահանքային նյութի կիրառմամբ հողի ֆիլտրացիոն հատկությունների փոփոխման միջոցով» (ղեկավար՝ տեխ. գիտ. թեկնածու Նորայր Մարտիրոսյան),

- «Պեստիցիդների և կենսապարարտանյութերի նանոկապսուլավորումը և գյուղատնտեսության մեջ դրանց կիրառման մեթոդների ուսումնասիրությունը» (ղեկավար՝ քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Ենգոյան):

3.2. Հաշվի առնելով, որ ներկայացված թեման համապատասխանում է համալսարանի ռազմավարությանը, կարևոր և իրագործելի է, երաշխավորել «Նոր պոլիմերահանքային նյութի կիրառումը հակաֆիլտրացիոն նպատակով ջրային համակարգերում եվ քաղաքաշինական օբյետներում» անվանումով հայտը (ղեկավար՝ տեխ. գիտ. դոկտոր Վաչե Թոքմաջյան)՝ ՀՀ գիտության կոմիտե ներկայացնելու և Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական խմբերի մեկնարկի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթին մասնակցելու համար:

4. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամում էլեկտրոնային թեստային քննությունների իրականացման կանոնակարգում կատարված փոփոխությունների և լրացումների հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ գիտական խորհուրդը միաձայն որոշեց հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամում էլեկտրոնային թեստային քննությունների իրականացման կանոնակարգում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները.

1. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամում էլեկտրոնային թեստային քննությունների իրականացման կանոնակարգի, այսուհետ՝ Կանոնակարգ, 2-րդ գլխի 3-րդ կետը վերախմբագրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ. ««Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա» առարկաների հանձնման համար հատկացվում է 90 (իննսուն) րոպե, մյուս առարկաների համար՝ 60 (վաթսուն) րոպե»:

2. Կանոնակարգի 2-րդ գլխի 5-րդ կետում «առնվազն 10 րոպե առաջ:» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ. «Դեկանատի ներկայացուցչի ներկայությունը քննական կենտրոնում պարտադիր է մինչև քննության մեկնարկը»:

3. Կանոնակարգի 2-րդ գլխի 16-րդ կետը վերախմբագրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ. «Յուրաքանչյուր քննության ավարտից հետո առնվազն 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում SS կենտրոնը քննության արդյունքները PDF տարբերակով էլեկտրոնային եղանակով ուղարկում է համապատասխան ամբիոնի, ՈՒԳԿ վարչության էլ.հասցեներին»:

4. Կանոնակարգի 2-րդ գլխի 17-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

5. 2020-2021 ուս տարվա համար ուսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգի բաղադրիչների փոփոխության հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ գիտական խորհուրդը միաձայն որոշեց 2019 - 2020թթ. հաստատված ուս. պլաններով սովորող ուսանողների համար՝ 2020-2021 ուս տարվա երկրորդ կիսամյակից սկսած հաստատել ուսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգի բաղադրիչների առաջարկվող փոփոխությունները.

1. Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Գիտական խորհրդի 26.12.2019 թվականի որոշման 5-րդ կետում նախատեսել բացառություն 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակում Համալսարանի բակալավրի կրթական ծրագրով 1-ին և 2-րդ կուրսերում ուսումնառողների համար, մասնավորապես՝ բազմագործոնային համակարգում գիտելիքների գնահատման բաղադրիչների տոկոսային հարաբերակցությունը հաշվարկել հետևյալ ձևով.

ա) Միջանկյալ քննություն - 30%,

բ) Վերջնական քննություն - 35%,

գ) Վերջնական քննություն - 65%, եթե դասընթացը չունի միջանկյալ քննություն,

դ) Հաճախումներ - 15%,

ե) 20%-ը ամբիոնի որոշմամբ հատկացնել ինքնուրույն աշխատանքին, անհատական առաջադրանքներին, ընթացիկ հարցմանը կամ լաբորատոր աշխատանքների հանձնմանը:

2. Ուսանողի կողմից դասընթացը համարել հանձնած, եթե տվյալ դասընթացի գնահատման բաղադրիչների գումարային միավորը մեծ կամ հավասար է 40-ի:

3. Եթե դասընթացի գնահատման բաղադրիչների գումարային միավորը փոքր է 40-ից, ուսանողը վերահանձնում է միջանկյալ և վերջնական քննության արդյունքները՝ մեկ ամբողջական տոմսով:

4. Վերջնական քննության մասնակցությունը պարտադիր է:

5. Միջանկյալ քննության արդյունքի վերահանձնում չի թույլատրվում:

6. ՀԱԱՀ մեթոդական խորհրդի կողմից ներկայացված ուսումնական ձեռնարկների տպագրության երաշխավորման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ գիտական խորհուրդը միաձայն որոշեց.

1. Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի կողմից ներկայացված «Հումքի ստացման տեխնոլոգիա», «Ձկնաբուծության տեխնոլոգիա» վերնագրով աշխատանքային տետրերը երաշխավորել տպագրության (հեղինակ՝ Ա. Հարությունյան),

2. Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի կողմից ներկայացված «Խաղողի և գինու որակի վերահսկում. քիմիական և օրգանոլեպտիկ անալիզների դերը գինեգործության մեջ» վերնագրով դասագիրքը երաշխավորել տպագրության (հեղինակ՝ Ա. Գաբրիելյան),

3. ՀԱԱՀ Հ. Պետրոսյանի անվան «Հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն» մասնաճյուղի գիտատեխնի-կական խորհրդի կողմից ներկայացված «Հայաստանի հողերի արդի վիճակը» վերնագրով մենագրությունը երաշխավորել տպագրության (հեղինակներ՝ Հ. Ղազարյան, Վ. ՈՒռուտյան, Գ. Գասպարյան):

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ